ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հայկաշեն համայնք, 1-ին փողոց, 14 ա, հեռ. 077863222

N-31

« 8 » հունիսի 2016թ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ
Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՄԵԾԱՐԳՈ ՄԱՐԶՊԵՏ

Կից Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Հաիկաշենի գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի հունիսի 6-ի « Արմավիրի մարզի Հաիկաշենի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 17-ի N 30-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 17-Ն որոշումը:

Առդիր 47 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.67/6678-16
09 06 2016

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հայկաշեն համայնք, 1-ին փողոց, 14 ա, հեռ. 077863222

# ՈՐՈՇՈՒՄ

2016թվականի հունիսի «6» N 17 -Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 30 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով , «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշենի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 17-ի «2016 թվականի Հայկաշեն համայնքի բյուջեն հաստատելու մասին » N 30-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն:

1. Եկամտային մասում՝
   1) Հողի հարկը պակասեցնել 500.0 հազ.դրամ և հաստատել 5400.0 հազ. դրամ:
2. Ծախսային մասում՝
   1) 01.01.01. բաժնի 4111 հոդվածը պակասեցնել 1810.9 հազ. դրամ և հաստատել 10032.9 հազ. դրամ:
   2) 1500.0 հազ դրամը ուղղել 10.07.01.բաժնի 4729 հոդվածին:
3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 31-ի N 344-Ն որոշմամբ հատկացված 189100 դրամը պլանավորել այլ դոտացիա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. ՌԱՖԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
2. ԱՆԴՐԻԱՍ ՍԵՐՈԲՅԱՆ
3. ԳԱՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
4. ԶԱՎԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 թ հունիսի «6»
գ. Հայկաշեն